© ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.
© Մ. Կարապետյան, 2010 թ.

Երկու խոսք

«Ամեն ինչ կապված է ամեն ինչի հետ»,- ասում է էկոլոգիայի հիմնական օրենքը: Մենք, բնականաբար, ընդունում ենք այդ օրենքը, բայց ընկալում ենք միայն նյութական մակարդակում, մի կողմ թողնելով գլխավոր, եթե ոչ ամենա-գլխավոր՝ հոգևոր ոլորտը:

20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին մենք ականատեսը եղանք ավերիչ ուժի երկրաշարժերի, փոթորիկների, հողմերի, ջրհեղեղների և այլ տարերային աղետների աննախադեպ աճի: Ի՞նչ է պատահել Մոլորակին, ինչո՞ւ է այն «մարդկության գլխին իր զայրույթը թափում»: Ինչո՞ւ են այդ տարերային աղետները ոչնչացնում քաղաքներ, գյուղեր, նավահանգիստներ, արդյունաբերական համալիրներ և այլն: Ինչո՞ւ է, ըստ եղանակագետների պատկերավոր արտահայտության, «եղանակը գժվել»:

Մենք պատասխանները փնտրում ենք բնության պրոցեսների օրինաչափություններում, Երկրի աշխարհագրական թաղանթի վրա անթրոպոգեն ազդեցության մեջ: Ճիշտ ենք փնտրում, բայց կրկին միայն նյութական մակարդակում: Ես համոզված եմ, որ հիմքերի հիմքը Աշխահաստեղծման հիմնարար օրենքների հետ հակասության մեջ գտնվող մեր ներկայիս հոգևոր վիճակն է: Հենց այդ հակասությունն է դրսևորվում արդեն նյութական մակարդակում՝ գործի դնելով համապատասխան մեխանիզմներ:

Ես բարձր եմ գնահատում կ.գ.թ., դոցենտ Մ. Կարապետյանի «Բնությունը և էթիկան» հանգամանալից աշխատանքը՝ նվիրված վերոհիշյալ խնդիրների և ոլորտների միջև «կամուրջներ հաստատելուն»:

Կարևոր եմ համարում նաև այն, որ այս աշխատանքում զետեղված է «Երկրի հրովարտակ»-ը նույնպես, որն անցյալ տասնամյակում մշակվել է միջազգային հանրության կողմից՝ Երկրի Խորհրդի ղեկավարությամբ, որպես կայուն զարգացման տեսական ու գործնական «բարոյական կոդեքս»: Հրովարտակը լայնորեն ներկայացվել է 2002 թ. Յոհանեսբուրգում կայացած կայուն զարգացման Համաշխարհային վեհաժողովում և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչվել է որպես կայուն զարգացման հիմքերի ուսուցման կարևոր միջոցներից մեկը:

Հատկապես կարևոր է, որ «Բնությունը և էթիկան» գիրքը գրվել ու հրատարակվում է հենց հիմա, երբ ամբողջ աշխարհը, Հայաստանի Հանրապետությունը ևս, ընդգրկված է «ՄԱԿ-ի կայուն զարգացմանը նպաստող կրթության տասնամյակի» իրագործման ակտիվ գործընթացում:

պրոֆեսոր Կարինե Դանիելյան

կենս. գիտ. թեկնածու, աշխ. գիտ. դոկտոր

«Հանուն կայուն զարգացման» ասոցիացիայի/

Ազգային ՅՈՒՆԵՊ կոմիտեի նախագահ

Ետ Առաջ

Բովանդակություն